Կարգապահական գործ թիվ ԿԳ-24156

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԲԵՐՏ ՍԱՐԻԲԵԿԻ ԿԱՆԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Անահիտ Մաղաքյանի ներկայացուցիչ Սոնիկ Մաղաքյանի և փաստաբան Ալբերտ Կանդալյանի,

քննության առնելով փաստաբան Ալբերտ Սարիբեկի Կանդալյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1446), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անահիտ Մաղաքյանի ներկայացուցիչ՝ Սոնիկ Մաղաքյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբան Ալբերտ Կանդալյանը հանդիսացել է Սամվել Մաղաքյանի իրավահաջորդ՝ Անահիտ Մաղաքյանի ներկայացուցիչը թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի շրջանակներում:

Ըստ Դիմողի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ փաստաբանի բողոքը վերադարձվել է՝ բազմաթիվ թերությունների պատճառով, ինչը հանգեցրել է Դիմողի բողոքարկման իրավունքի խախտմանը: Դատարանը նույն որոշմամբ սահմանել է կրկին ներկայացման համար հնգօրյա ժամկետ, սակայն փաստաբանը չի ներկայացրել բողոքը և չի տեղեկացրել այդ մասին Դիմողին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Թիվ ԿԳ-24156-2-Ա
23.10.2024թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 30.08.2024թ. բացատրությամբ հայտնել է, որ պայմանագիրը փաստաբանի հետ կնքվել է ընդհանուր աճուրդի համար, այլ ոչ թե միայն դատական պրոցեսի համար: Դիմողը հերքել է Փաստաբանի պնդումն առ այն, որ վերջինս պատշաճ ծանուցված չի եղել:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ ներկայացնելով գործի նկարագիրը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալբերտ Կանդալյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Անահիտ Մաղաքյանի ներկայացուցիչ՝ Սոնիկ Մաղաքյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 26.06.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Սոնիկ Մաղաքյանի բարեկամի հետ 02.07.2020թ. կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, ըստ որի ստանձնել է պատվիրատուի իրավունքների պաշտպանությունը աճուրդի անվավերության պահանջի գործով: Փաստաբանը նշել է, որ ստանձնած գործի շրջանակներում հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան և թիվ ՎԴ/4082/05/20 վարչական գործը մինչ օրս քննվում է:

Ինչ վերաբերում է թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործին, ապա Փաստաբանը նշել է, որ նշված գործով ներկայացուցչությունն իրականացրել է պայմանագրից դուրս:

Փաստաբանը հավելել է, որ իր վստահորդի մահից հետո, իր լիազորությունները դադարել են, նրա իրավահաջորդ՝ Անահիտ Մաղաքյանը և նրա ներկայացուցիչ Սոնիկ Մաղաքյանը փաստացի տեղյակ չեն պահել, որ դատարանի կողմից ստանում են որոշումներ: Ըստ փաստաբանի՝ տվյալ որոշումները նա չի ստացել:

Փաստաբանի պնդմամբ, նա անօրինական վարքագիծ չի դրսևորել, սակայն, եթե Պալատը գտնի հակառակը, Փաստաբանը պարտավորվել է կրել պատասխանատվություն:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ վերաքննիչ բողոքի ներկայացումը որևէ արդյունք չէր տալու, քանի որ նույնիսկ գործի վարույթը կարճելու մասին Դատարանի որոշման բեկանումից հետո Դատարանը հետագայում կարճելու էր գործի վարույթը, քանի որ վեճն ըստ էության սպառված էր:

Փաստաբանի պնդմամբ, ինքն իրականացրել է Դիմողի շահերի պաշտպանությունը այլ գործերով և նշված գործով վերաքննիչ բողոքի ներկայացումը որևէ հետևանք չէր կարող ունենալ դրանց վրա:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.07.2024թ. թիվ 275-Ա/ԿԳ-24156 որոշմամբ փաստաբան Ալբերտ Սարիբեկի Կանդալյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

11.07.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 11.09.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 23.10.2024թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Ալբերտ Կանդալյանը ստանձնել է Սամվել Մաղաքյանի իրավահաջորդ՝ Անահիտ Մաղաքյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործով 29.12.2022թ. որոշմամբ վարչական գործի վարույթը կարճել է: *Սույն փաստը հաստատվում է թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

3. Ալբերտ Կանդալյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործով 29.12.2022թ. որոշման դեմ, որը ՀՀ վերաքննիչ

վարչական դատարանի 23.06.2024թ. որոշմամբ վերադարձվել է: *Սույն փաստը հաստատվում է թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Ալբերտ Կանդալյանի կողմից վերաքննիչ բողոքը կրկին չի ներկայացվել: *Սույն փաստը հաստատվում է թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ալբերտ Սարիբեկի Կանդալյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012 թվականից, և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալբերտ Կանդալյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Այդ կապակցությամբ, փաստաբանի համար Կանոնագրքով սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պարտականությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Հանձնաժողովը՝ հաշվի առնելով սույն կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանին վերագրվող վարքագիծը, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերով նախատեսված պահանջների պահպանման մասով ապացուցման պարտականությունը կրում է հենց Փաստաբանը՝ առնվազն վստահորդի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում համապատասխան գործողությունները ձեռնարկելու մասով:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանը 02.07.2020 թվականի պայմանագրով ստանձնել էր Սամվել Մաղաքյանի շահերի պաշտպանությունը թիվ ՎԴ/7473/05/20 վարչական գործով: 03.12.2021 թվականին Սամվել Մաղաքյանի մահից հետո Դատարանի 20.04.2022 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է, իսկ Դատարանի 29.22.2022 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը վերսկսվել և կարճվել է:

Փաստաբանը ստանձնել է Սամվել Մաղաքյանի իրավահաջորդը հանդիսացող կնոջ՝ Անահիտ Մաղաքյանի շահերի պաշտպանությունը, ինչի կապակցությամբ Փաստաբանին 12.06.2022 թվականին տրվել է լիազորագիր, իսկ դրանից օրեր անց տրվել է ժառանգության իրավունքի վկայագիրը:

Փաստաբանը 07.06.2023 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք Դատարանի 29.22.2022 թվականի որոշման դեմ, որը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.06.2023 թվականի որոշմամբ վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ

«...բողոք բերող անձին առաջարկվում է

հստակեցնել իր դատավարական կարգավիճակը և ներկայացնել պատճառաբանված միջնորդություն՝ հայցվոր Սամվել Մաղաքյանին իրավահաջորդով՝ Անահիտ Մաղաքյանով, փոխարինելու վերաբերյալ...

...հստակեցնել բողոքով ներկայացված պահանջը և այն համապատասխանեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին...

...բողոքին կից բացակայում է բողոքի պատճենը երրորդ անձ Գևորգ Գասպարյանին ուղարկելու մասին ապացույցը...»: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.06.2023 թվականի որոշումից հետո Փաստաբանը վերաքննիչ բողոք կրկին չի ներկայացվել:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը, ստանձնելով նախ Սամվել Մաղաքյանի, իսկ այնուհետև նրա իրավահաջորդը հանդիսացող Անահիտ Մաղաքյանի շահերի պաշտպանությունը, անկախ գործի արդյունքի վերաբերյալ իր տեսլականից, պետք է բոլոր դեպքերում ձեռնարկեր ողջամիտ ջանքեր իր վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար, որոնք չեն կարող կրել ձևական բնույթ:

Այսինքն, ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոք ներկայացնելիս Փաստաբանն ըստ էության պետք է նպատակ հետապնդի ոչ թե ձևական առումով վերաքննիչ բողոք ներկայացնելու, այլ առնվազն ձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցներն այն վարույթ ընդունելով համար: Ըստ այդմ, եթե ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, մատնանշել է որոշակի թերություններ, ապա Փաստաբանը պարտավոր էր առնվազն շտկել մատնանշված թերությունները և կրկին ներկայացնել բողոքը:

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Փաստաբանն ընդունել է իրեն վերագրվող վարքագիծը, և չնայած գտել է, որ, վերաքննիչ բողոքը կրկին չներկայացնելով, չի վնասել իր վստահորդի շահերը, այնուամենայնիվ, նա պարտավոր էր հետամուտ լինել իրեն տրված հանձնարարության կատարմանը, որն առաջին հերթին ենթադրում էր դատական գործի վարույթը վերսկսելու և կարճելու մասին Դատարանի 29.22.2022 թվականի որոշման բողոքարկումը վերաքննության կարգով, ինչը սակայն Փաստաբանը չի ապահովել ամբողջ ծավալով:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ չի անդրադառնում նիստի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից նկարագրված այլ հանգամանքներին, որոնք փաստացի կապված չեն սույն կարգապահական գործով քննարկման առարկա հանդիսացող հարցի հետ՝ հաշվի առնելով Պալատի նախագահի որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի սահմանները:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հաշվի առնելով, որ Փաստաբանը 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, ինչպես նաև այն հանգամանքը, որ Փաստաբանն ընդունել է իրեն վերագրվող վարքագիծը, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի պահանջներով՝ Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ալբերտ Սարիբեկի Կանդալյանին (արտոնագիր՝ թիվ 1446) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24156-2-Ա
23 հոկտեմբերի 2024թ.
ք.Երևան